ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-19/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով
Վառելիքի /դիզելային՝ ամառային/ ձեռքբերման գնահատող հանձնաժողովի
արտահերթ նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 31.01.2019թ. ժամը 10.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սարոյանը
Անդամներ՝ Վ. Ավետիսյանը
Ա. Գաբրիելյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Նիկոլյանը

Վառելիքի ձեքբերման նպատակով էլեկտրոնային eauction-armeps.am համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի փոփոխված հրավերի տեքստը և պայմանագրի նախագիծը հաստատելու մասին

1. **Ընդունել ի գիտություն**

Համաձայն 30.01.2019թ. ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված բացասական եզրակացության՝ ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-19/6 ծածկագրով ընթացակարգի հրավերում արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնք ենթակա են փոփոխման /գրությունը կցվում է/:

2. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ **հանձնաժողովը որոշեց**.

2.1 ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-19/6 ծածկագրով հայտարարված ընթացակարգի հրավերում կատարել փոփոխություն

Ընդունվեց որոշում կողմ 3, դեմ 0 ձայներով:

2.2 Հաստատել հրավերում փոփոխություններ կատարելու մասին Հայտարարության տեքստը /կցվում է/

Ընդունվեց որոշում կողմ 3, դեմ 0 ձայներով:

3. «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ս.թ. փետրվարի 9-ին, ժամը 12.00-ին:

Ընդունվեց որոշում կողմ 3, դեմ 0 ձայներով:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Հ. Սարոյան

անդամներ՝ _____ Վ. Ավետիսյան

_____ Ա. Գաբրիելյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի հունվարի 31-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-19/6

Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց ՓԲ ընկերության կարիքների համար դիզելային վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ N 1	ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծին կից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում մատակարարման ժամկետները հստակ չեն
Փոփոխության նկարագրություն	ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվում պայմանագրի հաստատման օրվանից 6 ամիս՝ վճարման ժամանակացույցին համապատասխան
Փոփոխության հիմնավորում	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մաս
Փոփոխության առաջացման պատճառ N2	գնման առարկայի բնութագիրն ամբողջությամբ և հստակ չի նկարագրում ձեռք բերվող ապրանքի հատկանիշները
Փոփոխության նկարագրություն	բնութագրի հստակեցում **Ավտոմոբիլային դիզելային վառելիք** /Ցետանային թիվը 51-ից ոչ պակաս, ցետանային ցուցիչը-46-ից ոչ պակաս, խտությունը 15^0 C ջերմաստիճանում 820-ից մինչև 845 կգ/մ^3, Պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածինների զանգվածային մասը,11 %, ոչ ավելի, ծծմբի պարունակությունը 350 մգ/կգ-ից ոչ ավելի, բռնկման ջերմաստիճանը 55^0 C-ից ոչ ցածր, ածխածնի մնացորդը 10% նստվածքում 0,3%-ից ոչ ավելի, մածուցիկությունը 40^0 C-ում՝ 2,0-ից մինչև 4,5 մմ^2 /վ, պղտորման ջերմաստիճանը՝ 0 ^{0} C ոչ բարձր 5-ից: Ֆրակցիոն կազմը՝ 95 % թորման ջերմաստիճանը 65 ^{0}C ոչ բարձր, 250^{0}C ջերմաստիճանում ծավալային մասը ոչ բարձր 85%, 340^{0}C՝ ոչ ցածր 85% -ից, 350^{0}C՝ ոչ ցածր 85 %-ից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»/
Փոփոխության հիմնավորում	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մաս

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-19/6 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մ. Նիկոյյանին:

Հեռախոս՝010 65 40 73

Էլեկոտրանային փոստ՝ hhrc.gnumner@tna.am

ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով